

ԱՐԵՎԷԼԵԱՆ ՀԱՐՅԻ ԳԼԽԱՌՐ ԷՏՃՊՆԵՐԸ.

Պատմական ակնարկ.

Յունաստանի անկախութեամբ Բալկանեան թերակղզու վրայ ստեղծուեցաւ Թիւրքիայի կողքին նաեւ մի այլ քաղաքական ինքնուրոյն մարմին, իհարկէ ի հաշիւ Թիւրքիայի։ Սկսած այն օրից, երբ Օսմանցիները Բիւզանդական կայսրների մայրաքաղաքն առան, մենակ ու միահեծան տիրում էին նրանք այն հին կուլտուրական վայրերին. և 1829 թուից առաջին անգամ յաջողում է եւրոպական քաղաքականութեանն ու յատկապէս ռուսական ուժին սկիզբ դնել Թիւրքիայի քաղաքական բաժանման։ Մենք կարեւոր ենք համարում նորից շեշտել, որ այդ սկիզբը շատ շուտով իւր վերջը կունենար, եւրոպական Թիւրքիայի բաժանումն ու նրա իսպառ ոչնչացումը արագօրէն տեղի կունենար, եթէ չլինէր եւրոպական պետութիւնների շատ զօրեղ հակամարտութիւնը։ Սկզբում թւում էր, թէ Թիւրքիայի բախտով շահագրգռուած կարող են լինել միայն նրա սահմանակից պետութիւնները—ամենից առաջ Ռուսաստանն ու Աւստրիան. սակայն շատ շուտով պարզւում է, որ նրա բախտի տնօրէնները իրանց համարում են նաեւ Ֆրանսիան և Անգլիան. այդպիսով Թիւրքիայի քաղաքական դոյութեան կամ նրա ոչնչացման խնդիրը համաեւրոպական քաղաքականութեան հաղց է դառնում, որը լուծուել կարող էր այնուհետեւ ոչ թէ այս կամ այն առանձնակի պետութեան ուժերով, այլ եւրոպական պետութիւնների մեծամասնութեան կամքով։

Սակայն Ադրիանապոլսի խաղաղութեան անմիջական հետեանքն ու արդիւնքն այն էր, որ Ռուսաստանի ուժն Արեւելքում աւելացաւ, որովհետեւ նա էր, որ կնքահայր էր եղել նորածին քաղաքական մարմինն՝ Յունաստանին։ Ռուսական զօրութեան արագ և զգալի աճման պրոցեսը

անընդատ տեւում է մինչև Դրիմի պատերազմը—1853 թուականը: Եւրոպական պետութիւնները մեծ մասամբ զբաղուած իրանց ներքին զործերով հնարաւորութիւն և ժամանակ չունէին հետեւելու Արեւելեան Եւրոպայում կատարուող զործերին: Չմոռանանք, որ շուտով Եւրոպական երկիրների վրայով փչել է սկսում յուլիսեան և փետրուարեան յեղափոխութիւնների զօրեղ շունչը և կլանում Եւրոպական պետութիւնների աշաղրութիւնը, նաև ջլատում արտաքին քաղաքականութեան եռանդն ու թափը: Ռուսաստանը զարմանալի բախտ է ունեցել այդ կողմից: Ամեն անգամ երբ համաեւրոպական շարժումը կապել կաշկանդել է մանաւանդ արեւմտեան Եւրոպայի ժողովորդներն ու պետութիւնները, խլել է նրանցից որ և է հնարաւորութիւն զօրեղապէս հետեւելու աշխարհի անցքերին ու քաղաքական իրողութիւններին—Ռուսաստանը շնորհիւ իր աշխարհադրական դիրքին՝ իւր հեռաւորութեանը արեւմտեան կենդրոններից—միշտ ազատ է մնացել և ուրիշների զբաղուածութիւնից օգտուել: Այդպէս էր Պրանսիական Մեծ Յեղափոխութեան ժամանակ, երբ ամբողջ Եւրոպան ծանր հեծում էր նապոլէոնի տիրապետութեան տակ—Ռուսաստանն ազատ էր ու վերջն էլ նա էր, որ միանգամից դեկալտրոզ դեր ձեռք բերեց Եւրոպական քաղաքականութեան մէջ: Այդպէս լինում է այժմ 1830-ի և 1848-ի յեղափոխութիւնների ժամանակ: Պրանսիայի մայրաքաղաքում պատրաստուող և այնտեղից ամբողջ Եւրոպայի վրայ տարածուող յեղափոխական շարժումը պետութիւնների ձեռքն ու ոտը կապում է և զրանից օգտւողը դարձեալ լինում է Ռուսաստանը որի զօրութիւնն հասնում է մինչև այդ չտեսնուած չափերի: Նիկողայոս I կայսրը իւր զսպուած ու պահպանողական քաղաքականութեամբ դառնում է Մետտերնիխի հետ միասին Եւրոպական քաղաքական կարծիքի տէրը: Նրա հզօր ձեռքը միշտ կաղմ էր ու պատրաստ գնալու ճնշելու ազատասիրական որ և է նոր շարժում:

Պարզ էր հէնց սկզբից, որ Ռուսաստանն իր ուժի գե-

բաղանցութիւնն ամենից առաջ և ամենից բնականօրէն թիւրքիայի դէմ պէտք է հանելու թէև Նիկողայոս I կայսրը առիթներ չէ բաց թողել ամենուրեք ասելու, որ Ռուսաստանը քաղաքական նուաճումների չի ձգտում թիւրքիայի սահմաններում: Եւ իրաւ Ռուսաստանն սկզբում ոչ թէ յարձակում է թիւրքիայի վրայ և նրա կործանման պրոյեկտն արագացնում, այլ ընդհակառակը պաշտպանում թիւրքիայի ամբողջութիւնը ընդդէմ Եգիպտոսի փոխարքայ Մահմադ Ալիի յարձակումների դէմ: Սա օգտուելով թիւրքիայի թուլութիւնից մտնում է Ասորիք, Փոքր Ասիա, յաղթում է Օսմանեան բանակին և քայլում է Պոլսի վրայ: Սարսափած Մահմադ II սուլթանը Նիկողայոս կայսրից օգնութիւն է ուղղում և ռուսական 15,000-անոց բանակը Եւրոպական թիւրքիա է մտնում ազատելու սուլթանին: Անշուշտ Ռուսաստանն այդտեղ ղեկավարում էր իւր կայսեր՝ Նիկողայոս I-ի քաղաքականութեամբ, որի համոզմունքով պէտք էր պատժել Մահմադ Ալիին որպէս խռովարարի ու ապստամբի, որովհետև կայսրն իրան կոչուած էր համարում Եւրոպական այդ տեսակի բոլոր շարժումները ճնշելու, ինչպէս որ յետոյ նա ճնշեց նաև հունգարական ազգային շարժումը (1849 թ.): Սակայն կար և մի այլ շարժառիթ, որով ղեկավարուած ռուսներն արգելեցին Եգիպտոսի փոխարքային Պոլիս մտնել. Ռուսաստանն հաւատացած էր թիւրքիայի մօտալուտ կործանմանը և չէր ցանկանայ, որ սուլթանների հիւանդ գինաստիան վերանորոգուի մի թարմ ու երիտասարդ ցեղով, որն ապագայում կարող էր պատուհաս դառնալ Ռուսաստանի գլխին:

Իւր ծառայութեան փոխարէն Ռուսաստանն ստանում է թիւրքիայից Հունքիար-Խուկեղեսուի դաշնադրութիւնը (1533 թ.), որով բոլոր Եւրոպական պետութիւնների մէջ միայն Ռուսաստանն էր արտօնում միջամտելու թիւրքական զործերի մէջ: Ռուսաստանը խոստանում էր հարկ եղած դէպքում օգնել թիւրքիային, որի փոխարէն ձեռք էր բերում բացարձակ հովանաւորութիւն, այլ և ռուսական պատերազմական նաւատորմի դի համար Դարդանեղով

ազատ ելումուտքի արտօնութիւն: Թէև այս միահեծան զօրեղացման դէմ բողոքեցին միւս պետութիւնները՝ ամենից առաջ Անգլիան, սակայն անօգուտ: Միայն 1840-ին է յաջողւում որ Հունքիար-Իսկելեստի զաշնագրութիւնը փոխւում է Լոնդոնեան տրակտատի, որի համաձայն Անգլիան, Ռուսաստանը, Աւստրիան և Պրուսիան փոխադարձապէս պատրաստւում են պահպանել Արևելքում Status quo-ի և երաշխաւորել Բարձրագոյն Դրան ամբողջութիւնը:

Սակայն արևելեան հարցի մէջ աւելի մեծ անակրն-կաներ կային Ռուսաստանի համար Ղրիմի պատերազմի օրերին և դրանից յետոյ: Մինչդեռ միւս պետութիւնները բաւականանում էին Թիւրքիային խորհուրդներ տալով հպատակ քրիստոնեաների նկատմամբ մեղմ վարուելու և մեծ յոյսեր էին կապում Ռեշիդ-փաշայի Հատտի Շերիֆի՝ սահմանադրական հրովարտակի հետ—Ռուսաստանը բացարձակ կերպով չէր հաւատում Թիւրքիայի վերակազմութեանը և նոյն իսկ այդպիսի վերակազմութիւնը զրաւակար էր համարում և աշխատում էր առաջին յարմար առթից օգտուել և վերջացնել Թիւրքիայի բաժանման գործը: Նիկողայոս 1 կայսրը 1844 թուին դեռ երկու կարծիք չունէր Թիւրքիայի ապագայի նկատմամբ, նա ասում էր, «Իմ կարինեւում Թիւրքիայի մասին երկու ենթադրութիւն կայ. կամ նա մահամերձ է և կամ արդէն մեռած»: 1852 թուին նա ասում է անգլիական դեսպանին. «Հարկաւոր է Թիւրքիայի յուղարկաւորութեան և թաղման համար նախապատրաստութիւններ տեսնել»: Ռուսաստանի այդքան համարձակ և արագ պատրաստակամութիւնն հասկանալի էր միանգամայն: Թիւրքիայի քաղաքական բաժանման դէպքում ամենից շատ օգուտը ինքն էր լինելու. մինչդեռ միւս պետութիւնները մասամբ հեռաւորութեան մասամբ աշխարհի այլ մասերում զբաղուած լինելու պատճառով չպիտի կարողանային հարկաւոր եղած բաժինն ստանալ:

Եւայց և այնպէս Եւրոպական պետութիւններն աշա-լուրջ կերպով հսկում էին ռուս-թուրքական յարաբերու-

Թիւնները և Անգլիայի գլխաւորութեամբ աշխատում պահել Թիւրքիայի ամբողջութիւնը ու խանդարել Ռուսաստանի ակորժակների իրադրութեամբ: Ամենից պայծառ կերպով այդ արամադրութիւններն հանդէս եկան Ղրիմի պատերազմի ժամանակ:

Ղրիմի պատերազմը իւր ընթացքով և հեռեանքներով անգլիական քաղաքականութեան գործ է: Նրա առիթը լինում է մի շատ հասարակ դէպք: Նախկին զաշնադրութիւնների ուժով Ռուսաստանն իրաւունք ունէր հովանաւորելու՝ սկզբում բոլոր քրիստոնեաներին, բայց յետոյ միայն յունադաւաններին: Նոյնպիսի իրաւունքներ էր իրան վերապահել Ֆրանսիան լատինադաւանների վերաբերմամբ: Երկու դաւանարանութիւնների վանականների մէջ մի վեճ է ծագում երուսաղէմում՝ Փրկչի Գերեզմանի բանալիների համար և Ֆրանսիայի կողմից հովանաւորուող կաթոլիկները կարծես յաղթում են: Նիկողայոս I կայսրը, որ իւր երկարատե խաղաղ կայսրութեան ընթացքում ահադին հօրութեան տէր էր դարձել, այժմ ժամանակն հասած է համարում Թիւրքիան վերջնականապէս բաժանել: Բանակցութիւններ են տեղի ունենում Ֆրանսիայի, Ռուսաստանի և Թիւրքիայի միջև: Կայսրը իշխան Մենշիկովին կոստանդնուպոլիս է ուղարկում հիմնուած Կուչուկ-Կայնարջու խաղաղութեան վրայ պահանջելու քրիստոնեաների բացարձակ և միահեծան հովանաւորութիւն Թիւրքիայում: Ռուս իշխանը Պոլսում իրան շատ գրգռիչ կերպով է պահում: Թիւրքիայի մինիստրների մօտ նա մտնում է իւր ճանապարհորդական վերաբերումով և կեղտոտ կօշիկներով և ապրիլի 19-ին 1853 թուին յայտնում է Ռուսաստանի ցանկութիւնը, մի զաշնադրութեամբ ապահովել Ռուսաստանի համար Թիւրքիայի մէջ ապրող 10 միլիոն յունադաւան հպատակների նկատմամբ միահեծան հովանաւորութեան իրաւունք: Դա նշանակում էր, թէ Թիւրքիան իւր սեփական ձեռքերով ստորագրելու էր իւր իսկ կործանման օրհասական փաստաթուղթը: Մայիսի 6-ին ռուս իշխանը յանձնում է Դրանը ռուսական վերջնազիրը, որին պէտք է

Թիւրքիան մինչև մայիսի 10-ը պատասխանէր: Բարձրագոյն Դուռը ճարը կտրած զիմում է ֆրանսիական և անգլիական կառավարութիւններին, որոնց դեսպանները խորհուրդ են տալիս Թիւրքիային երբէք տեղի չտալ Ռուսաստանի պահանջներին և յոյս զնել իրանց օժանդակութեան վրայ: Երբ իշխան Մենշիկովը վերջին անգամ ևս կրկնում է նոյն պահանջները և բացասական պատասխան ստանում, Ռուսական զիւանազիտական ամբողջ մարմնի հետ Թոգնում հեռանում է Կոստանդնուպոլսից:

Անգլիայի հասարակական կարծիքը վաղուց թշնամաբար էր տրամադրուած դէպի Ռուսական յարաճուն զօրութիւնը: Անգլիայի թէ քաղաքացիական և թէ քաղաքական շրջաններում շատ մեծ երկիւղ էին կրում Ռուսաստանի չափազանց զօրութիւնից, վտանգւում էին հնդկական օսհմանները, ուստի բնական է, որ անգլիական զիւանազիտութիւնն ամեն միջոց գործ պիտի զնէր կանգնեցնելու Ռուսական այդ շեշտակի յառաջխաղացութիւնը ի վնաս Թիւրքիայի: Թէև Պալմերստոնը դեռ աւտաքին գործերի մինիստր չէր, բայց նրա կարծիքները վճռող հանդիսացան անգլիական քաղաքականութեան ընթացքի նկատմամբ: Այդ կարծիքն ասում էր հրամայողաբար. Անգլիայի համար անհրաժեշտ է Թիւրքիայի ամբողջութիւնը և պէտք է պահպանուի դա: Մուլթանին հասկացնում են, որ պահանջուած դէպքում նա մենակ չի մնայ Ռուսական զօրքերի զիմաց: Իրերի այս դրութիւնը աւելի քան ցանկալի էր ֆրանսիական կառավարութեան համար: Նա էլ շատ հաշիւներ ունէր Ռուսաստանի հետ և այժմ Անգլիայի հետ միաբանած ասպարէզ էր դուրս գալիս մաքրելու իւր հաշիւները: Նապոլէօն III կայսրը իւր կողմից խմայնում է սուլթան Աբդուլ Ազիզին, որ Ռուսների զինուորական յառաջխաղացման դէպքում ֆրանսիական զօրքերը կրգործեն Թիւրքիայի օգտին:

Սուլթանը բաց ձեռքերով է ընդունում երկու կողմից իրան յայտնուած պատրաստակամութիւնը և առաջարկում է Ռուսներին Թոգնել Դանուբեան իշխանութիւնները և

յետ քաշուել և երբ Ռուսաստանը չի կառարարում Թիւրքիայի պահանջը, սա 1853 թ. հոկտեմբեր ամսին պատերազմ է յայտարարում Ռուսաստանին: Հետեւեալ տարուայ մարտին Թիւրքիայի հետ միանում են Անգլիան և Ֆրանսիան և սկսւում է Ղրիմի նշանաւոր պատերազմը մի կողմից Ռուսաստանի, միւս կողմից Թիւրքիայի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև: Բայց արդէն գրանից առաջ նիկողայոս I կայսեր հրամանով 40,000 ռուս առաջ են շարժւում դէպի Դանուբեան իշխանութիւնները՝ դէպի Վալախիա և Մոլդաւիա: Ռուսաստանի փորձերը՝ Աւստրիային և Պրուսիային իւր կողմը ձգել—ապարդիւն անցան. միայն այնքան յաջողուեց, որ այդ պետութիւնները չէզոք մնային: Պրուսիայի թաղաւորն ասել էր. «Մահմեդի հետ Բրիտանի դէմ կռուել չեմ կարող. բայց և անհնարին է Ռուսաստանի հետ անարդարութեան համար պայքարել»—ու հրաժարուել էր պատերազմից:

Պատերազմը շատ ինքնայատուկ ընթացք է ստանում: Ռուսական զօրքերը բռնում են Մոլդաւիան և Վալախիան. ռուսական նաւատորմիցը Սինոպի ջրերում բռնում է Օսմանեան նաւաւորւմբը, յաղթում է ու այրում մի մասն էլ գերի վերցնում: Բայց հենց այդքանը, ինչպէս ասացինք շուտով Թիւրքիային օգնութեան են գալիս Ֆրանսիան և Անգլիան, որոնք մարտին 1854-ին պատերազմ են յայտարարում Ռուսաստանին և երեք պետութիւնների միացեալ նաւատորմիցը շարժւում է դէպի Սև ծով: Ռուսական նաւատորմիցը նոյնպէս տեղի է տալիս ու քաշւում Սևաստապոլ, որ նիկողայոս I կայսեր հաղացողութեան յատուկ առարկան էր և հաւաքատեղի ու Միջերկրական ծովում զործող ռուսական պատերազմական նաւերի համար առաջնակարգ նաւահանգիստն էր: Նսպօղէտն կայսրը առաջարկում է կռիւը տեղափոխել Ղրիմի թերակղզին և ջօրք տի հանել: Դրադերն ընդունւում է և 50,000 ֆրանսիացի ու անգլիացի շարժւում են դէպի Ղրիմ: Դաշնակիցների յարձակման գլխաւոր կէտը Սևաստապոլն էր, որ ռուսները շատ ուժեղացրել էին: 1854 թ. սեպտեմբերին

սկսում է այդ բերդի պաշարումը: Ռուսները ամբողջ մի տարի քաջաբար ու յամառ կերպով պաշտպանւում են շնորհիւ Տօպլեբենի ճարպիկ ղեկավարութեան: Սկսած ապրիլի պաշարումը երկու կողմից ևս ահադին քանակութեամբ մարդկային զօհեր է պահանջում: Վերջապէս 1855 թուին սեպտեմբեր ամսին քաղաքն ստիպուած է լինում անձնատուր լինել: Դրանից առաջ մեռել էր նիկողայոս I կայսրը (մարտի 2-ին 1855) և նրա յաջորդ Ալեքսանդր II-ի զօրապետներն ասիական թիւրքիայում ռուսական զէնքի փառքը դարձեալ վերականգնել էին ու վերջրել անմատչելի Կարսը: Այս վերջին հանգամանքը մանաւանդ հնարաւորութիւն էր տալիս ռուսներին պատուով խաղաղութիւն առաջարկել: Իաշնախից կողմերն ևս վաղուց ցանկանում էին և յունուարին սկսւում են բանակցութիւնները, երրորդ ամսին՝ մարտի 30-ին 1856 թուին գլուխ է դալիս Փարիզի խաղաղութիւնը, որը արեւելեան հարցի զարգացման և նրա պատմութեան մէջ կրկնորդ կայանն է:

Փարիզի խաղաղութիւնը մեղմ և խնայող տոնով յայտարարում էր ի լուր աշխարհի Ռուսաստանի թուրքական քաղաքականութեան առժամանակեայ պարտութիւնը: Ռուսաստանը պէտք է հրաժարուէր Իանուբեան իշխանութիւններից՝ Վալախիայից և Մոլդաւիայից, որ նա բռնած ունէր սկսած 1829 թուից և որոնք շուտով միասին կազմում են Ռումինական թագաւորութիւնը, պատճառ լինելով այդպիսով թիւրքիայի տերիտորիալ երկրորդ մեծ կորստեան (առաջին կորուստը Յունաստանն էր): Բացի դրանից Ռուսաստանն ստիպուած էր հրաժարուել 13,000 քառ. քիլոմետր տարածութիւնից՝ Իանուբից և Պրուտից ձախ՝ որ անցաւ յետոյ Մոլդաւիային: Այդպիսով Ռուսաստանը Իանուբից բոլորովին հեռացւում էր ու դրութիւնը զարձեալ Բախարեստի խաղաղութեան պայմաններին հաւասարւում: Իանուբի վրայով նաւարկութեան իրաւունքը յանձնւում էր Եւրոպական մի յանձնախմբի, որ այդ դործը պէտք է հսկեր և կանոնաւորեր, Ռուսաստանը կորցնում էր Իանուբեան իշխանութիւնների մէջ

իւր հովանաւորելու իրաւունքը: Սե ծովը յայտարարուած էր չեզոք, այսինքն բոլոր ազգերի պատերազմական նաւերի համար փակ, իսկ նոյն ազգերի առեւտրական նաւերի համար՝ մատչելի: Բացի այս ծանր պայմաններից Ռուսաստանը ստիպուած էր Ասիական թիւրքիայում արած իւր նուաճումները յետ տալ թիւրքիային: Այդպիսով անառիկ կարսը յետ է գնում թիւրքերին: Ռուսաստանի գերիշխանութիւնը թուրքական ջրերում խորտակուեցաւ և թիւրքական քաղաքականութեան մէջ մեծ ազդեցութիւն ձեռք բերին Անգլիան և Ֆրանսիան¹⁾:

Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի ծրագրները թիւրքիայի նկատմամբ շատ որոշ կերպով տարբերում էին Ռուսաստանի մտադրութիւններից: Մինչդեռ վերջինս թիւրքիայի վերակենդանացմանը յոյս չունէր ամենեւին և օր առաջ սւզում էր վերջ տալ Եւրոպական թիւրքիայի գոյութեանը ու ապահովել Օսմանեան պաւն հպատակների կեանքի դոյքի ազատութիւնը, ապա նաեւ քաղաքական անկախութիւնը, Ֆրանսիան և Անգլիան ամեն կերպ աշխատում էին պահել թիւրքիայի ամբողջութիւնը, նրա տերիտորիալ լրութիւնը, միայն ռեֆորմներով թեթեւացնել քրիստոնեայ հպատակների դրութիւնը: Ֆրանսիական և անգլիական ազդեցութեամբ էր այժմ, որ սուլթան Աբդուլ Ալի Նիզամի Փարիզի խաղաղութիւնից անմիջապէս յետոյ հրատարակում է Հատտի-Հումայունը՝ նոր ռեֆորմների հրովարտակը, որ մասամբ կրկնութիւն և մասամբ էլ շարունակութիւն էր 1839 թուին Ռեշիդ փաշայի հրատարակած Հատտի-շերիֆին: Այժմ շեշուում էր ոչ միայն անձնական ազատութեան սկզբունքը, որ առաջ էլ մի քանի անգամ ապարդիւն կերպով հռչակուել էր, այլ և Օսմանեան

1) Dietrich Schäfer, Weltgeschichte der Neuzeit II 170, 205-9. Jäger, Geschichte des neunzehnten Jahrhunderts, II 10—18 Трайль—общественная жизнь Англии VI 95—102, 215—225. Пфлюгъ—Гартунгъ. Всемирная История II 398—416 Ch. Seignobos—Politische Geschichte des Modernen Europa in 19. Jahrhundert, 1910. XX Kapitel.

կայսրութեան բոլոր հպատակները առանց կրօնի խտրութեան օրինական աղատութիւն և հաւասարութիւն էին ստանում: Այդպիսով մահմեդականների և քրիստոնէի մէջ վերանում էր օրինական որեւէ տարբերութիւն. քրիստոնեաներն էլ աղատութիւն էին ստանում ամենաբարձր պաշտօնների համար. նրանց գլխարկը վերանում էր. նրանց առանձին զորքերը յանձնում էին զաւառական խորհուրդների՝ քրիստոնեաներից կազմուած:

Եթէ Հատաի-Հումայունը լրիւ կամ իւր գլխաւոր զօհրով իրազօրծուէր, թիւրքիան դրանով զրկուած կըլինէր իւր կրօնական բնոյթից և կըստանար Եւրոպական մոգեուն պետութեան բնաւորութիւն: Սակայն թիւրքիայի համար այդ խոստման կատարումն անհնարին բան էր:

Ղրիմի պատերազմից սկիզբն է առնում ռեֆորմների այն կոմեդիան, որի մէջ գլխաւոր դերակատարները բացի թիւրքիայից—ականաջօրէն նաեւ Եւրոպական պետութիւններն էին: Օսմանեան կայսրութեան բազմամիլիոն քրիստոնեայ հպատակների համար ուղղակի կորստաբեր էր այն հաւատը, որ ունէին Եւրոպական պետութիւնները թիւրքիայի վերակազմութեան նկատմամբ: Եւ թիւրքիան գերազանցօրէն խելօք ու շրջահայեաց կերպով շահագործում էր Եւրոպայի հաւատը, համբերութիւնը և նրբանկատութիւնը: Սուլթանը և նրա մահմեդական հպատակները հակառակ էին ռեֆորմներին: Մահմեդականները վաղուց սովորել էին անհաւատներին արհամարել, թուրքը երբեւիցէ չէր կարող տանել, որ գեաւուրը իրաւունքներով մահմեդականին հաւասարուի և դրա բնական հետեանքն այն էր, յայտարարուած Հատաի-Հումայունը միայն թղթի վրայ մնար: Հերցոգովինայի և Սև Լեւան քրիստոնեայ ազգաբնակչութիւնը փորձեց ապստամբել, բայց արիւնալի կերպով դարձեալ հնազանդութեան բերուեց: Եւրոպական պետութիւններն այն ժամանակ պաշտօնապէս ցաւ յայտնեցին Բարձրագոյն Դրանը, որ սա շատ անհոգ է ռեֆորմների ներմուծման զործի մէջ և Ռուսաստանը Ղրիմի պարտութիւնից միայն երեք տարի յետոյ հանդէս է գալիս դարձեալ

և միւս պետութիւններին առաջարկում Օսմանեան քրիստոնեայ հպատակների վիճակի միահամուռ քննութիւնը (1859): Այդ քննութիւնը տեղի է ունենում 8 տարի յետոյ միայն և պարզում է, որ Հատտի-Հումայունը լոկ թղթի վրայ է մնացել և քրիստոնեաների վիճակը մազաշափ անգամ չի լուաղել: Եւրոպան մի անգամ ևս զօրեղ կերպով բողոքում է և պահանջում անյապաղ ռեֆորմներ մտցնել:

Ռեֆորմներ մտցնելու բնաւորութեան և եղանակի մասին տաքաձայնութիւններ կային երկու մրցող պետութիւնների՝ Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ: Ֆրանսիայի տեսակէտը սխալ նմանութեան վրայ էր հիմնւում: Ֆրանսիան պահանջում էր, որ Օսմանեան պետութեան մէջ բոլոր հպատակները հաւասար ճանաչուին օրէնքի առաջ, որ այդ պետութեան մէջ ճնշուին ազգային, անջատողական ամենայն ձգտում և շարժում: որ բոլոր այլազան և այլակրօն ցեղերն ու ժողովուրդները ձուլուեն հետզհետէ և ստեղծեն մի մեծ և միաձոյլ պետութիւն օսմանեան ազգի: Այդ տեսակէտի համար օրինակ էր ծառայում ինքը՝ Ֆրանսիական ազգը: Սակայն մոռացւում էր մի շատ կարեւոր հանգամանք. Օսմանեան պետութեան մէջ ուղիղ բաղմաթիւ ցեղերի ցեղական և կրօնական զօրեղ տարբերութիւնները և առանձին մարմին կազմելու անպարտելի ցանկութիւնը, մի կամք, որ վերջի վերջոյ յաղթող դուրս եկաւ: — Այլ էր Ռուսաստանի ծրագիրը ռեֆորմներ մտցնելու նկատմամբ: Նա ելակէտ ունէր տարբեր ժողովուրդների ցեղական, կրօնական և համայնական հաստատութիւնները և պահանջում էր իւրաքանչիւր ցեղի համար առանձին երաշխաւորութիւն: «Հաւասարութիւնը օրէնքի առաջ մի ցնորք է և ցնորք էլ կը մնայ, քանի թուրքերը թուրք են, այսինքն քանի որ նրանք Վուրանի վարդապետութիւնը պինդ կրպակեն, որը նրանց և քրիստոնեաների մէջ մի անանցանելի սահման է դնում»: Ռուսաստանը պահանջում էր որ իւրաքանչիւր քրիստոնեայ ժողովուրդ պէտք է կազմի մի փոքրիկ ինքնավար քաղաքական մարմին:

Թիւրքիան հետեւում է սկզբում Ֆրանսիայի ծրագրներին, բայց շուտով Ֆրանսիան իւր հմայքը կորցնում է Ֆրանկո-պրուսական պատերազմի մէջ, մեռնում են Ֆուաա և Ալի Ֆրանսասէր մինիստրները և Ռուսաստանը դարձեալ ազատ ձեռքեր է ստանում Թիւրքիայի գործերի մէջ խառնուելու:

Դեռ Բուհաստանի ազատութեան ժամանակները Նիկողայոս I կայսեր յանձնարարութեամբ իշխան Կոչուբէի նախագահութեամբ մի մասնախումբ է կազմուում Թիւրքիայի բաժանման գէպքում մտածելու նրա վիճակի մասին: Այդ ժամանակներն էր, որ Կապոզիստրիան առաջարկում է Օսմանեան կայսրութիւնից հետեւեալ երկրորդական պետութիւնները կազմել. 1) Դակիոյ իշխանութիւնը—Մուղաւիայի և Վալախիայի հոգերից. 2) Սերբիայի թագաւորութիւնը—Սերբիայից, Բոսնիայից և Բուլղարիայից. 3) Մակեդոնիայի թագաւորութիւնը—Թրակիայից, Մակեդոնիայից և Պրոպոնդիտէ, Սամոթրակէ, Իմբրոսէ ու Թագոս կղզիներից. 4) Էպիրոսի թագաւորութիւնը—վերին և ստորին Ալբանիայից և վերջապէս 5) Յունաստանի թագաւորութիւնը—Բալկանեան թերակղզու հարաւում Սրտա քաղաքից և գետից սկսած: Դարդանելի և Բոսֆորի բանալին՝ Կոստանդնուպոլիսը պէտք է ազատ քաղաք մնար և լինէր կենդրոնը այն դաշնակցութեան, որ կազմելու էին այդ հինգ նորակազմ պետութիւնները:

Այդ ծրագիրն այն ժամանակ հնարաւոր չեղաւ իրագործել, այժմ դա նորից հանդէս է գալիս աւելի մեծ Թափով և իրագործուելու աւելի մեծ հաւանականութեամբ: Ղրիմի պատերազմի մէջ, ճիշտ է, ռուսական զէնքն ու զիպլոմատիան յաղթուեցան, բայց յաղթողները եւրոպական պետութիւններն էին, Ֆրանսիան և Անգլիան և ոչ Թիւրքիան: Թիւրքիայի տնտեսական դրութիւնը գնալով վատթարացաւ, նրա հպատակներին հարստահարելը ծայրայեղ չափերի հասաւ և երկիրը պատառ պատառ լինելու անպայման վտանգի առաջ դուրս եկաւ: Հարկերը անտանելի ծանրացան, անբաւականութիւնը աճեց, հակայական

շափերի հասաւ: Հպատակ ազգերից մոլորաւներն ու վա-
լախներն էին: որոնք ինքնուրոյնութիւն և քաղաքական
անկախութիւն էին ստացել: Բայց նրանցից աւելի շուտ և
աւելի վաղ էին սկսել սլաւոն ազգերը թիւրքական լծից
ազատագրուելու իրանց հոյակապ պայքարը: Եւ չնայած
զրան: զեռ չէին ստացել ազատութիւն: Յոյներն հարաւում
և Ռումինեան հիւսիսում արդէն ազատ էին: բայց սերրն
ու բոլգարը՝ ալբանացին ու մակեդոնացին զեռ կուռում
էին ապարդիւն կերպով: Դրիմի պատերազմից յետոյ, ինչ-
պէս ստացինք, զրութիւնն աւելի սաստկանում է: Բալ-
կանեան սլաւոնները աւելի մեծ թափով են պայքարում
իրանց ազատութեան համար:

Հերցոգովինայի սերբերը՝ խթանուելով մի կողմից իրանց
հարեան Սև լեռնցիներից միւս կողմից հաւանօրէն նաև
սերբիական և ուսական զործակալներից—հրաժարւում
են իրանց վաստակական պարտականութիւններից և 1875
թուին ապստամբում են: Եւրոպական պետութիւններն
զբաղուած էին իրանց ներքին զործերով և շատ քիչ մա-
մանակ ունէին Օսմանեան կայսրութեամբ հետաքրքրուե-
լու: Հերցոգովինայի ապստամբութեանը հետևում է շու-
տով նաև բոլղար զիւղացիների ապստամբութիւնը (1876 թ.
մայիս): Հէնց այդ ժամանակներն էր, որ Մալմիկում մահ-
մեդական ամբոխը սպանում է Ֆրանսիական և գերմանա-
կան կոնսուլներին:

Այս կրիտիկական օրերին թիւրքիան ապրում է նաև
մի այլ տեսակի ճգնաժամ: Երիտասարդ թուրքերի մի խումբ
զգալով հայրենիքի մօտալուտ կորուստը և երկիւղ կրելով
եւրոպական միջամտութիւնից իւր իսկ սեփական նախա-
ձեռնութեամբ հանդէս է գալիս ու օսհմանադրութիւն
պահանջում: յայտնելով եւրոպական պետութիւններին,
որ եթէ թիւրքիան բռնակալ սուլթանի փոխարէն մի սահ-
մանադրական իմաստուն իշխան ունենայ—ցեղերի և կրօն-
ների տարբերութիւնից բարձր կանգնած մի պարլամենտի
հետ միասին, նա կրփրկուի: «Երիտասարդ թիւրքիան» ու-
ղում էր ապացուցել եւրոպային, որ սահմանադրութիւնը

չի հակասում Ղուրանին և որ թիւրքական կառավարութիւնը ընտրութեան վրայ է հիմնուած: Սերբական և բուլղարական ապստամբութիւնը «երիտասարդ թուրքերի» համար շատ յարմար ժամանակին էր դալիս: Նոյա սպառնալիքի տակ Արգիւլ-Ազիզը արձակում է իւր մեծ փեղիքին և կառավարութեան զուլս է կոչում երիտասարդ թուրքերի առաջնորդներից մէկի՝ Միդհատ փաշային: Շուտով Արգիւլ-Ազիզին գահընկեց են անում և սուլթան է դառնում նրա ազգական Մուրադ V-ը: Սա էլ հոգեկան հիւանդ յայտարարուելով՝ զրկում է գահից և նրա տեղ սուլթանութեան է հրաւիրում նրա եղբայր Արգիւլ Համիդը 1877 թ. օգոստոսի 31-ին: Կառավարութեան զուլս էր կանգնած Միդհատ փաշան, որն և այս բոլոր յեղաշրջումների հոգին էր:

Նոր սուլթանի առաջին դրժն է լինում ապստամբ բուլղարներին հնազանդութեան բերել, և որովհետեւ կանոնաւոր զօրքը չէր բաւականացնում, Բուլղարիա են ուղարկում բաշի-բոզուկների խմբեր, որոնք անասելի անգթութիւններ են գործում, որոնց տեսակն ու բնաւորութիւնը հայ ընթերցողներին դժբախտաբար շատ լաւ ծանօթ են: Ամերիկական կոնսուլի տեղեկութիւնների հիման վրայ այդ վայրագութիւնների ժամանակ բաշի-բոզուկները աւերել են հարիւր գիւղ, 25000—40000 բնակիչ կոտորել, 12000 կին փախցրել: Բնական է, որ Եւրոպայի հասարակական կարծիքը ծառանար այդ անօրինակ անգթութիւնների դէմ և ստիպէր իւր կառավարութիւններին աւելի խիստ միջոցներով ապահովել և երաշխաւորել քրիստոնեաների կեանքն ու ստացուածքը: Յատկապէս Անգլիայում մեծ էր յուզումը բուլղարական սարսափների պատճառով, ամբողջ երկում սկսւում է յօգուտ երիտասարդների մի ջտեսնուած ազիտացիա և Մեծ Գլադստոնը դարձեալ քաղաքական-հռետորական ասպարէզ է նետուում:

Հէնց այդ ժամանակն էր, որ երիտասարդ թուրքերը Եւրոպական պետութիւնների անցանկալի ու անախորժ միջամտութիւնը, այլ և խնամակալութիւնը բնումը խեղ-

գելու համար յաջողեցնում են բացարձակ միապետական թիւրքիան դարձնել սահմանադրական պետութիւն: Մինչև այժմ էլ բոլորովին չպարզուեց, թէ Միդհատ փաշան և նրա ընկերներն իրօք համոզուած կողմնակիցներ էին սահմանադրական կառավարութեան, թէ այդ միջոցը լոկ մի կոմեդիա էր — իրանց առժամանակեայ նպատակներին հասնելու համար: Յամենայն դէպս թիւրքիան 1876 թուին ղեկավարներին մի սահմանադրութիւն է ստանում բոլոր կողմերով նման էւրոպական սահմանադրութիւններին: Այդ սահմանադրութեան մէջ կարելի էր գտնել և՛ պատասխանատու մինիստրների խորհուրդ, և՛ երկպալատանի պարլամենտ — այդտեղ կար մամուլի և ժողովների ազատութիւն, անկախ դատավարութիւն, նոյն իսկ պարտադիր տարրական կրթութիւն: Որովհետև թիւրքիան արդէն մի քանի անգամ այդպիսի խաղեր էր ունեցել իւր հոլատակների և եւրոպական դիւանագիտութեան հետ, ուստի այս անգամ իւր հաղորդակցութեան մէջ եւրոպական պետութիւններին ասում էր, «այդ սահմանադրութիւնն այլ ևս լոկ խոստում չէ, այլ մի իրական և ձևական ահա, որ այդ օրուանից բոլոր օսմանների սեփականութիւնն է լինելուն»:

Թիւրք կառավարութիւնն անմիջապէս փորձում է օգտուել իւր այդ նոր սահմանադրութիւնից, աշխատելով խաբել էւրոպական կարծիքը: Եւր Հերցեգովինայի սերբերի և բոլղար դիւդացիների ապստամբութիւնից յետոյ Սերբիան և Սև Լեւոնն էլ պատերազմ են յայտարարում սուլթանին և երբ թիւրքիան իւր ամբողջ ուժով ընկնում է այդ փոքրիկ ժողովուրդների վրայ, սպառնալով իսպառ խորտակել նրանց զօրութիւնն ու ոչնչայնել, այն ժամանակ հանդէս է գալիս Ռուսոց կայսր Ալեքսանդր II-ը և կատեղորիկ կերպով պահանջում սուլթանից զինադադար անել Սերբիայի և Սև Լեւոնի հետ: Միևնոյն ժամանակ Անգլիայի նախաձեռնութեամբ մեծ պետութիւնների դեսպանները հաւաքւում են Լոնդոն ընդհանուր խորհրդակցութեան: 1876 թ. ղեկավարների 22-ին, հէնց առաջին ժողովի ժամանակ վեր է կենում թիւրքիայի ներկայաու-

ցիշը և յայտնում, որ սահմանադրական Թիւրքիայի օրէնքներին հակառակ է, որ սուլթանը առանց պարլամենտի համաձայնութեան որ և է փոփոխութիւն կամ ռեֆորմ մտցնի երկրի մէջ: Եւրոպական պետութիւնները ցայտուն կերպով տեսնում են, որ այդ ամբողջ սահմանադրական կոմեդիան ստեղծուած էր, որպէս զի Թիւրքիան կարողանայ խուսափել Եւրոպական միջամտութիւնից և ռեֆորմները իրադործելուց: Վերջապէս նրանք զալիս են այն համոզմանը, որ Թիւրքիայի քրիստոնէայ ազգերի միակ փրկութիւնը ազգային, ցեղական ինքնավարութեան մէջ է: 1877 թ. մարտի 21-ին Կոստանդնուպոլսում հաւաքուեցաւ մեծ պետութիւնների ժողովը, որի մէջ նրանք համաձայնութեան են գալիս իրանց հիւպատոսների և պատուոնեաների միջոցով հսկել Թուրք կառավարութեան քայլերը ռեֆորմներ մտցնելու գործում և եթէ այս անգամ էլ իրանց յոյսերը ի դերեւ ելնեն, այն ժամանակ արդէն աւելի կտրական միջոցների պէտք է դիմել:

Ռուսաստանն եթէ ուզում էր երբեեղէ գործել, ապա այժմ պիտի գործէր ու ձեռքից չփախցնէր ամենայարմար վարկեանը: Ալէքսանդր Նախապէս Աւստրիայի կողմից ապահովուելով (Բոսնիան ստանալու խոստումով Աւստրիան խօսք է տալիս չէզոք մնալ) պատերազմ է յայտարարում Թիւրքիային և 1877 թուին ապրիլ ամսին ռուս բանակը մեծ իշխան Նիկողայոսի հրամանատարութեամբ անցաւ Թուրքական սահմանն ու այդպիսով սկսուեցաւ վերջին ռուս-թուրքական պատերազմը:

Ալէքսանդր II կայսրը, որ այս պատերազմի համար Ազատարար անունն ստացաւ, իրօք նորանոր նուաճումների չէր ուղարկում իւր զօրքը: Ռուս մեծ ժողովուրդը իւր մեծ կայսեր հետ միասին հանդէս էր գալիս օգնութեան հասնելու ցեղակից և դաւանակից եղբայրներին, որոնք իրանց դարաւոր թշնամու լծի տակ անտանելի տանջուելուց յետոյ այժմ կանգնած էին իսպառ բնաջինջ լինելու վտանգի առաջ: Բազմակնճիռ արեւելեան հարցի մէջ, որ լի է զանազան պետութիւնների նեղ ու եսական շահերի

պայքարով, որ հարուստ է զժրախտաբար ստոր կրքերի աւերածով ու անգութ զիւանաղիտութեան շատ անգամ անսիրտ ակտերով, Աղէքսանդր կայսեր այդ արշաւանքը փայլուն ոստղի պէս վեր է բարձրանում և ոռոս մեծ ժողովրդի ծառացումն ու անձնազոհութիւնը մեզ երևում է եղբայրասիրութեան, զոհաբերութեան մի գերազոյն ակտ, որ յատուկ է միայն մեծ ժողովուրդներին:

Ռուս թուրքական պատերազմի ժամանակ Եւրոպական բոլոր պետութիւնները իրանց չէզոք յայտարարեցին. և ոռոսներն անարգել կերպով առաջ շարժուեցին յարձակուելով թէ Եւրոպական և թէ ասիական թիւրքիայի վրայ: Ռուսաստանի հետ միասին կուում էր սկզբում միայն Սև Լեւոքը, ապա պատերազմի ընթացքում Սերբիան նորից է կոիւ յայտարարում թիւրքիային, Ռումինիան ևս թէ զօրքով և թէ այլ կողմերով օգնում էր Ռուսաստանին: Լնդհանուր առմամբ պատերազմն ասիական մասում աւելի արագ էր առաջ ընթանում քան Եւրոպական թիւրքիայում: Միայն յուլիսին յաջողուում է ոռոսներին Դանուբն անցնել, Տրիպոլիոն զրաւել: Ապա նրանք շարժւում են դէպի Բալկանեան սարերը, շուտով առնում են Նիպկայի անցքը և բերդը, զրաւում են Նիկոպոլը և պաշարում են Ռուշուկը: Սոսկալի շատ էր ոռոսաց կորուստը, բայց բանակն անընդհատ տուած էր շարժւում, մանաւանդ որ այդ օրերին ասիական մասից Կարսի առման լուրն է դալիս ու աւելի մեծ ոգևորութիւն բերում իւր հետ: Վերջապէս ընկնում է նաև այդ կողմերի ամենաամուր բերդը՝ Պլենան, որի պատերի տակ ոռոսներն ու ոռումինացիները 21,000 սպանուած թողին: Բերդի կամենդանտը Օսման փաշան, որ հերոսաբար պաշտպանուեց երկար ժամանակ, վերջի վերջոյ անել զրութեոն մէջ զգաց ինքն իրան: Մօտենում էր ամենասոսկալի թշնամին—սովը և նա երկու ընտրութիւն ունէր. կամ անձնատուր լինել և կամ փորձել պաշարողների շղթան պատռել: Քաջ գէներալը փորձում է երկրորդը, բայց յետ է մղւում ոռոսներից և ստիպուած է լինում 1877 թ. դեկտեմբերի 10-ին 40,000

մարդով անձնատուր լինել: Պլենայի առումը վճռող նշանակութիւն է ունենում այս պատերազմի համար: Շուտով հասնում են նաև Ռուսաստանից նոր զօրքեր և ուսմները չնայած Բաղկանեան խիստ ձմրանը արագօրէն շարժւում են հարաւ: Ադրիանապոլիսը առանց կռուի նրանց ձեռքն է ընկնում և ուսւ բանակին անարգել Կոստանդնուպոլիս է դիմում: Բայց հէնց այստեղ էլ առաջ է դալիս Եւրոսրական մեծ պետութիւնների քաղաքականութիւնը և կտրում Ռուսաստանի առաջասլաց թեւերը:

Անգլիական արտաքին գործերի ղեկավար լորդ Բիկոնսֆիլդը ամենամեծ անհանդստութեամբ էր հետեւում ռուսաց զէնքի յաջողութիւններին: Դեռ պատերազմի սկզբում նա յայտարարել էր, որ Կոստանդնուպոլսի, Եգիպտոսի և Սուեզի ջրանցքի անձեռնամխելիութիւնը Անգլիական կենսական շահերի գործ է և այդ մտքով հաւաստիացումներ էր ստացել Աղէքսանդր կայսրից: Երբ ռուսները Պլենան առան, Անգլիան նորից դիմեց Ռուսաստանին և հասկացրեց նրան, որ թոյլ չի տայ նոյն իսկ ժամանակաւոր զրաւումը այդ վայրերի և Ռուսաստանն այս անգամ ևս ստիպուած էր հանգստացնել անգլիական զիւանդէտներին: Եւ երբ յետոյ Թիւրքիան Անգլիայի միջոցով հաշտութիւն խնդրեց, Վիկտորիա Թագուհին յատուկ հեռագրով խնդրեց Աղէքսանդր II կայսեր դադարեցնել պատերազմական զործողութիւնները: Ռուսները չպատասխանեցին այդ հեռագրին և դա պատճառ եղաւ, որ անգլիական միջերկրական նաւատորմիղը հրաման ստացաւ զէպի Դարդանել շարժուել: Անգլո-ռուսական պատերազմի վտանգն արդէն ակներև էր:

Ռուսաստանն անկարող էր այդ ծանր պատերազմի ռիսկն իւր վրայ առնել: Մանաւանդ որ Աւստրիայի և Ռումինիայի բռնած զիրքն էլ սպառնական էր և հեշտութեամբ կարող էր Ռուսաստանը իւր զօրեղ զիրքից Եւրոպական մի քանի պետութիւնների դաշնակցութեան դէմ միանգամից յայտնուել: Ռուսաստանը բարեռք է համարում կանգնել Պոլսի պատերի առաջ և պարտուած Թիւրքիային

խաղաղութեան պայմաններ թելադրել: Սան-Ստեֆանոյում 1878 թ. մարտի 3-ին երկու կուռղ կողմերը խաղաղութիւն են կապում:

Սան-Ստեֆանոյի խաղաղութեան պայմանները իսպառ զէրոյի էին հաւասարեցնում Եւրոպական թիւրքիայի հոգերը: Կազմւում էր մի նոր իշխանութիւն՝ Բոլղարիա, որը տարածուելու էր մինչև Էդէյեան ծովը, այնպէս որ թիւրքիայի ձեռքը մնացած մի քանի կտոր հոգերը՝ Ռումելիա, Ալբանիա և Բոսնիա—խրարից բոլորովին անջատ դրութեան մէջ էին մնալու: Ռուսներն իրաւունք էին համարում ամբողջ Բոլղարիան երկու տարի պատերազմական դրութեան մէջ դնելու և զրաւուած պահելու: Բոսնիան և Հերցեգովինան ինքնավար կառավարութիւն էին ստանում: Սերբիայի և Սև Լեռան հոգերը բաւականին նոր յաւելումներ էին ստանում: Ռումինիան ստանալու էր Դորրուջան և զրա փոխարէն Ռուսաստանին տալու էր 1856 թուին նրանից խլուած և իրա հոգերին միացրած Բեսարաբիայի մի մասը: Թիւրքիան պարտաւորւում էր վճարել Ռուսաստանին մի միլիարդ և 400 միլիոն ռուբլի պատերազմական տուգանք, որը յետոյ ի նկատի ունենալով թիւրքիայի Ֆինանսական վատթար դրութիւնը, վերածուեց Ասիական թիւրքիայի մի քանի սահմանազծային վայրերի: Բացի դրանից կարսն ու Բաթումը պէտք է մշտապէս Ռուսաստանին անցնէին:

Սրանք բոլորն այն պայմաններն էին, որ Ռուսաստանն առաջարկել էր ու թիւրքիան ընդունել: Դրանով Ռուսաստանն ինչ կասկած, որ մի փայլուն յաղթանակ էր տանում, մի անգամից ջախջախելով թիւրքիայի Եւրոպական զօրութիւնը, այլ և ուղիներ բանալով նրա ասիական մասաւոր ոչնչացման: Ռուսաստանը ձեռք էր բերում անմատչելի ու անառիկ զիւրքեր Ասիայում և Եւրոպայում: Նրա ստեղծած Բոլղարիան, Սերբիան, Սև Լեռանը զեռ երկար ժամանակ ամուր պատուար կըլինէին Ռուսաստանի կողմից Աւստրիայի նկատմամբ: Նրա առաջ բացւում էին Պոլսի, Էդէյեան ծովի և Փոքր ասիական արեւմտեան այլ և.

Միջերկրական ծովի արևելեան ափերի նկատմամբ շատ զրաւիչ հեռանկարներ։ Ռուսաստանն հեշտութեամբ կարող էր դառնալ զօրեղ ծովային պետութիւն։—Ահա այդ տեղ է, որ նրա շահերը ուղղակի ընդհարուած էին Անգլիական շահերի հետ, իսկ նրա ցամաքային՝ Բալկանեան զօրեղացումը խանգարում էր աւստրիական հանգստութիւնը։ Հասկանալի էր այնուհետեւ, թէ ինչ ահագին իրարանցում է ձգում Սան-Ստեֆանոյի խաղաղութեան դաշինքը Եւրոպայում։ Անգլիան հաւաքում է իւր ուժերը, նոյն իսկ Հնդկաստանից զօրքեր է տեղափոխում ու լորդ Բիկոնսֆելդը պարզ կերպով յայտնում է, որ եթէ չփոխուի Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնը, Անգլիան պատերազմ կը յայտարարի Ռուսաստանին։

Այնուհետեւ սկսում է զիւանագիտական մի երկար ու ձիգ աշխատանք պետութիւնների մէջ, որի հետեանքը լինում է Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնը ենթարկել մի Եւրոպական կոնգրէսի քննութեանը։ Գերմանիան, որ չէզոք էր և ըստ երեւոյթին ամենից քիչ շահ ունէր Բալկանեան զօրքերի մէջ, ուրախութեամբ ընդունում է կոնգրէսը Բերլինում անելու առաջարկը և Բիսմարկի նախագահութեամբ բացում է Բերլինի վեհաժողովը յուլիսի 13-ին, 1878 թուին։ Աշխատանքները տեւում են չորս շաբաթ. Բիսմարկը շատ առիթներ է ունենում իւր զիւանագիտական հմտութիւնն ու արուեստը ցոյց տալու։ Կոնգրէսն ընդունում է հետեւեալ կէտերը*).

Սերբիայից և Սև Լեռնից խլում էին այն յաւելումների մեծ մասը, որ Ռուսաստանն տանելով Թիւրքիայից նրանց էր տուել։ Նոր կազմուած բուլղարական իշխանութիւնը նոյնպէս շատ կտրաւում է, այժմ Բուլղարիայի մէջ մտնում է միայն իսկական Բուլղարիայի հիւսիսային մասը, որը ընկած է Բալկանների և Դանուբի միջև։ Լոկ

*) Սան-Ստեֆանոյի և Բերլինի վեհաժողովի պայմանները վերցրել ենք Пflugъ-Гартунгъ, Всемирная История 1815—1910, 1910. երես. 406—409.

անուանապէս նա մնում էր սուլթանին հպատակ, իւր ներքին գործերում բոլորովին անկախ և ինքնավար էր։ Ռուսներն իրաւունք ունէին Բուլղարիայում մնալ միայն 9 ամիս։ Իսկ այդ երկրի այն մասը, որ բնկնում էր Բալկաններինց դէպի հարաւ, իւր զլխաւոր քաղաք-Ֆիլիպպոպոլսով կազմելու էր ինքնավար մի նահանգ Արևելեան Ռումելիա անունով, որը սակայն մնալու էր Օսմանեան կայսրութեան մասը։ Բայց ստանալու էր սուլթանինց նշանակուած գեներալ-նահանգապետ։ Սերբիան, Ռումինիան և Սև Լեռը զտնուում էին լիակատար անկախ պետութիւններ։ Դորուջան մնում է Ռումինիային, բայց զբա փոխարէն Ռումաստանին է անցնում։ Բեոսարարիայի մի մասը, ինչպէս որոշուած էր Սան-Ստեֆանոյի դաշնագրութեամբ։ Ասիական մասում Ռումաստանը յետ էր տալիս էլ գերումը, բայց պահում էր Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները, այն պայմանով սակայն, որ Ռումաստանը չամբացնի Բաթումը և այդ կարեւոր նաւահանգիստը բոլոր պետութիւնների առևտրական նաւերի համար ազատ թողնի։ Բացի այդ Թիւրքիան մի փոքրիկ հող զիջելու էր Յունաստանին։ Դարդանելը և Բոսֆորը փակ պէտք է մնային բոլոր ազգերի պատերազմական նաւերի համար։ Իսկ պետութեան միւս մասերում, յատկապէս Ասիական նահանգներում Թիւրքիան խոստանում էր արմատական ռեֆորմներ մտցնել քրիստոնեաների ու մահմեդականների իրաւունքների հաւաստութեան տեսակէտով։ Այս մասումն է հռչակաւոր 61-րդ յօդուածը—որ բովանդակում է հայկական նահանգներում ռեֆորմներ մտցնելու Թիւրքիայի պարտաւորութիւնը։ Միւս պետութիւններից Անգլիան ստանում Կիպրոսը, Աւստրիան զբաւում էր Բոսնիան և Հերցեգովինան, Ֆրանսիան կողմնակի խոստում էր ստանում գրաւելու Թունիսը։ Այսպիսով Բերլինի դաշնադրութեամբ որ կազմում է արևելեան հարցի երրորդ էտապը, Օսմանեան կայսրութեանը Եւրոպայում մնում են Կոստանդնուպոլսի և Ադրիանապոլսի վիլայէթները (Ռումելին) Ալբանիան, Եպիրոսը և Մակեդոնիան։

Բերլինի դաշնագրու թեամբ արեւելեան ինդիքը մտնում է իւր նոր ֆազի մէջ: 1877 թուից յետոյ Բալկանեան թերակղզում հանդէս են գալիս նոր պետութիւններ, մինչեւ այդ ժամանակ Օսմանեան լծի տակ եղած սերբերն ու բուլղարները, Բոսնիայի ու Հերցեգովինայի ինչպէս նաեւ Սև Լեռան բնակիչները այժմ անկախութիւն են ստանում և իրաւունք՝ իրանց գործերը անձամբ և ազատօրէն տնօրինելու: Ազատարար կայսեր ցանկութեամբ և ռուս զօրքի հերոսական արշաւանքով ճիշտ է ազատուեցին բալկանեան քրիստոնեաները, բայց ոչ բոլորը: Արեւելեան հարցի յետագայ զարգացումը պէտք է նպատակ ունենար Եւրոպական թիւրքիայում քրիստոնեաներին իսպառ ազատել Օսմանեան լծից, Արեւելեան Ռումելիայում, Մակեդոնիայում, Ալբանիայում և Եպիրոսում եղած սերբերին, բուլղարներին և յոյներին միացնել իրանց ազգակից պետութիւններին և թիւրքերին իսպառ հեռացնել Եւրոպայից, այլև Ասիական թիւրքիայում քրիստոնեայ հպատակներին համար (հայեր, յոյներ, ասորիներ) տանելի վիճակ ստեղծել և նրանց կուլտուրական խաղաղ զարգացումն ապահովել: Եւ իրօք արեւելեան հարցը առաջ է դնում այդ տենդենցներով իրագործելու վերեւում գծուած նպատակները: Եւ այսօրուայ Բալկանեան ցեղերի պատերազմը դարձեալ նոյն նպատակի համար է: Բոլոր նշաններից երևում է, որ Եւրոպական թիւրքիային շատ տասնամեակներ չէ վիճակուած ապրելու, որով կը վերջանայ արեւելեան հարցի Եւրոպական կողմը: Իսկ թէ ինչ կըլինի թիւրքիայի ասիական նահանգները, ինչ կըլինի Փոքր Ասիայում ու Հայաստանում ապրող հայերի վիճակը, այդ ևս կախուած է մեծ մասով Եւրոպական մեծ պետութիւնների շահերի յարաբերութիւնից:

Գեորգ Ալբուսեան

3 նոյեմբ. 1912 թ.